

պատճառը, որ նա երկար ժամանակ ըլ կա-
րսղացաւ, որոշել իր կոչումը: Կա իր մանկա-
վարժական զործունեութիւնն սկսեց միայն
1816 թուականից:

Երկար ժամանակ խորհելով ու բնութիւնը
քննելով՝ Ֆրէօրէլն հասկացաւ, որ Աստուած
յայտնուումէ փոքր և մեծ բաներում և վեր-
ջապէս այն եղբակացութեան եկաւ, թէ մար-
դըս երեխայութիւնից սկսած պէտք է ծա-
նօթանայ բնութեան հետ և նրա զարգացու-
մը պէտք է հիմնուած լինի տիեզերքի ընդ-
հանուր կազմակերպութեան ուսումնասիրու-
թեան վրայ:

Այն քննադատութիւնները, որ արել են նրա
գրուածքների մասին, չէ կարող նսեմացնել
նրա գործնական աշխատանքը, Մինչզեռ Շուա-
սօն և Պիտաղոցին թափառումէին տեսա-
կանութեանց մէջ, այդ խորհրդաւոր երազողն
իր գաղափարներին ձև տուեց, ուսումնասի-
րեց երեխայի բնութիւնը կարեոր համարեց
շարժողութիւնը և եղափացրեց, որ երեխա-
յի անմիտ շարժողութեան կարեռութիւնից
պէտք է յառաջացնել խելացի գործողութիւն-
ներ: Այդ մաքով էր, որ նա հնարեց առար-
կաներ, որոնց ոչ թէ պէտք է ցոյց տային ե-
րեխային, այլ և պէտք է նրա ձեռքը տային:
Այդ առարկաներն ունին մաթեմատիքական
յարաբերութիւն միմեանց հետ և իրական
արժեք: Դրանցից մի քանիսը կարող են հա-
մարուել խաղալիկ բայց ոչ անմիտ և ոչ էլ
ասպարդիւն, այլ սովորցնում և զարգացնում
են երեխային: Այդ առարկաների օգնութեամբ
երեխան հնարումէ ձեռափոխումէ. միջոց է
գտնում իր գործոններութեամբ և աշխատան-
քով իրազործել իր մաքերը և այդ աշխատան-
քը հեռացնում է երեխային ստրկական կեր-
պիւ նմանեցնելուց, ստիպում է նրան ստեղ-
ծել և երեխային դարձնումէ մտածող էակ:
Պարապելով երեխն արուեստով, երբեմն հը-
նարազիտութեամբ՝ նա պատրաստուումէ մեր
ժամանակի պահանջն համաձայն հնարագէտ
արուեստաւոր գառնալ: Ամեն գործում հնա-
գիտութիւն մտցնել՝ կը նշանակէ զարգացներ

երեխայի ճաշակը գեղպի գեղեցիկը, որ յետոյ
ներգործելու է նրա մտաւոր և բարոյական
կեանքի վրայ, որ կը թութեան նպատակի մի
մասն է:

(Ալ Հարուշակուի):



ՄԱՏԵՐԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ

ԱՐԵՍԱԿԵՐ 1.0.ԱՏԻՎ.ԵՐՏՅԻ Վ.ԱՐԴԱՐԵՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Աշխարհաբար թարգմանեց)

ՄԻԱՅ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՏԵՐԱԾՈՒՆԵԱՆՑ

• • • Ողջոյն Ձեզ, յօթինիւ մատնագիրք
և Թաքմանիւ զրոց ի զանազան լեզուաց Տե-
ղմակութեանց, զրս օկտակար համարից բա-
ռոյական կը թութեան և ծեղնտու արուեստին
ի բուռութեան • • • :

• Անդր. Կոնդ. օքն. ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՒՆՅԱՆ
ԷՄԵՆՅԱ ՀԱՅՈՑ..



շանաւոր բացառութեամբ
վենեսեակի և վիէն-
նայի Միսիթարեան
միարանների, Հայոց
մէջ ներկայումս, զը-
րագէտ անձինք շատ քը-
չերն են պարապում դա-
սական (հաւուչ) զրուածների քննութեամբ,
որն այժմ Եւրոպայի մէջ գեղեցիկ մասնագի-
տութիւններից մինն է Համարուում: Հայու-
թեան երկու զիխաւոր կետրոններում՝ կոստան-
դընուպոլսում և Տփխիսում ներկայումս չու-
նինք պարբերական մի հանդէս, որը նուիրած

լիներ զուտ մեր պատմական գրականութեան ուսումնասիրութեան:

Խնչպէս յայտնի է Հայկական հինդգրչաղիբների կողմից Ա. Խջմիածին և Ա. Կըռուսաղէմ աւելի հարուստ են, քան Վենետիկ, քան Վիեննա: Բայց ի՞նչ, կարեւոր վերջին տեղերում բազմապատիկ թուով աւելի են զրչաղիբներ լցու տեսնում: Քան Խջմիածնում և Երրուստիկնում: Պատմաները չենք ուզում այժմ քննել այդ բանը թողնելով մի ուրիշ անդամուայ: Այսքանը միայն ասենք որ Վենետիկի պատուելի հայրերը մինչև վերջերքս էլ աշխատումեն մեր երկրի զանազան կողմերից ձեռագիրներ հաւաքել: Մինչև անդամ փորձեր են արել երեւմնապէս այս ու այն միջոցներով Խջմիածնի Մատենադարանից զրչաղիբներ տեղափոխել Ա. Պազարու կղզին, չըրաւականանալով իրանց ունեցածներով: Մեր տասձը զրպարտութիւն չը կարծեն ումանք, մենք փաստերի վերայ հաստատուած ենք խօսում: Այդ ցոյց է տալիս մեր ձեռքում եղած մի նամակը, Վենետիկի միաբան հանգուցեալ բժշկեան Մինաս վարդապէտի ձեռքով զրուած: Վերջինս զրումէ այդ նամակը Կովկասի իւր մի բարեկամին:

• • • մանաւանդ սակա ազգասէր ջանիցդ— «զրումէ նամակազիրը—ի ձեռս բերելոյ զիաւուոր զրչաղիրս առ ի տալ ի լոյս անթերի յաջոցդ իմաստասէր մտաց: Արդ խնզրի Շահ-էւալ յԱղնուութենէ Զերմէ զհետ լինել զտաւնել զգրչաղիր աշխարհազրութիւն Խորենացւոյն, կարծեմ (°) զիւրաւ ի ձեռս բերեալ զայն Խջմիածնէ, զի կամք են մեզ հետզհետէ զամենայն ընտիր մատենագրութիւնս նախնեաց մեր յատակ ի լոյս ընծայել ի շահ աղջիս: Եւ նորին աղադաւ համարձակիմ բաշխել զիմաստախոչ սիրտ մտերմիդ խօսել ընդ արքիապատիւ կարապետ եպիսկոպոսի տեղուոյդ և հաճեցուցանել զնաւ, զի փոխանակեցէ ընդ տպագրեալ մատենից մերոց զկրկին հին ծառընտիրս, մին երկիջեան, և միւսն զրեալ ի թուին Նլ: Եթէ այս չիցէ հնար, գէթ թոյլ տացէ զտանել այզր և տալ

«ընդօրինակեալ զճառս ինչ ի մատենից անտի զոր և ողջունեմ խոնարհութեամբ ամենայն մեծարանոք և ակնածութեամբ

Մնամ Աղնուամեծար տերութեանդ աղօթարար ծառայ

Հ. ՄԻՒԱՍ վարդապէտ ԲԺՇԿ Ա.Ն.

Մեր ազգային պատմական գրականութեան մէջ նշանաւոր մատենաղիբների զրուածներից մի երկուուր ինչպիսիք են Խորենացի, Եղիշէ, արդէն թարգմանուած են Կաշխարհաբար: Շատերնու ինչպէս Ազգաթանգեղոս, Փարակեցի, Կորիւն, Բիւզանդ, Ասողիկ, Ուխտանէս և այլք, մնում են զեռ ևս չը թարգմանած: Աեր Ջիններիս շարքին պատկանումէր նաև ԺԱԴ զարու մեր «ողբերգակ պատմազիր» Արիստակէս Լաստիվերացին, որի «Հայոց պատմաւթիւնը» աշխարհաբարհաբար թարգմանութեամբ լցու տեսաւ վերջերքս արժ. Մինաս քհ. Տէր Պետրոսեանի աշխատասիրութեամբ: Հայր Մինասը որ այժմ Կարսի պատուաւոր և զարդացած քահանաներից մինն է, բարի օրինակ կարող է գտանալ զաւառացի իւր ձեռնհաս պաշտօնակիցներին: «Պարագ ժամանակս ահօգուու անցկացնել չը ցանկանալով,—զրում է իւր յառաջաբանի մէջ արժ. թարգմանիքը— Արիստակէս Լաստիվերացու պատմութիւնն աշխարհաբար թարգմանեցի, ընթերցող հասարակութեանը հասկանալի և օգտաւէտ անելու համար: . . . Այն աշխատութիւնս թէ որքան օգտաւէտ է լինելու ընթերցող հասարակութեանը, ես չը զիսեմ միայն անյայտ չէ այս որ բնագիրը հասարակութեան ամենամեծ մասին անմատչելի է: Անմատչելիութիւնը Հ. Մինասը վերագրում է նախ՝ զրտրար զրուած լինելուն, երկրորդ չափազանց թանկ լինելուն: . . . Իսկ ինչ վերաբերումէ (իմ) թարգմանութեան արժանաւորութեանը, կամ պակասութեան, այդ էլ մեռմէ անաշառ քննն ադամ շարունակումէ Հ. թարգմանիքը—որպէս զի թերութիւնները ցոյց տալով, միջոց ասց առաւել ևս զտելու կատարելագործելու: Այժմ աշխատենք «անաշառ

կերպով ցցց տալ թարգմանչի քանի մի աչքի ընկնող «թերութիւնները», որ նա միջոց ուշ նենայ «առաւել զտելու կատարելադորձելու»:

Նախ քան զբքի նիւթի, թարգմանութեան մասին խօսելը, աւելորդ չեր լինր մի քանի խօսք նուիրել արտաքինի և թարգմանչին վերաբերեալ էջերի մասին:

Գիրքը ապազրուած է Ալէքսանդրապոլում Արք. Պ. Մալսասեանի տպարանում անցեալ 1893 թուականին: Կազմուած է ութածալ (8 տ.) միջակ զիրքով = էջ 338: Թուղթը և տիպը մաքուր, բաւարար: Գիրքը 60 կող, է որ թանկ չէ: Գրաբար տպազրութիւնն արժէ 1 ր. 50 կ. որ աշխարհաբարում դեռ ծանօթութիւններ էլ կան:

Առաջին երեսը զբքիս արժանապատիւ թարգմանիչը նուիրումէ իւր «անդին մօրը» որ, նա թէւ «... մի զիւղացի, անդրագէտ, խեղճ և բառի բուն նշանակութեամբ աղքատ կին» է եղել բայց իւր նիւթական աննախանձելի զրութեան մէջ էլ կրթութեան նշանակութիւնն հասկանալով, ուսումի է տրուել իւր որդուն (Պինասին) «... օրհնեալ լինի քո անունը—զրումէ երախտագէտ որդին —որ թէ և մի զիւղացի հասարակ կին էիր, բայց զբացմունքովդ, մայրական գորովամիտ և աննկուն արիութեամբդ շատ յատուկների նախանձելի»:

Քեզ սիրող որդի:

Հետեւեալ երեսից սկսուում է թարգմանչի 4 էջից բաղկացած յառաջարանը, որի մասին արդէն խօսեցինք, ծանօթացնելով մեր ընթերցողներին բովանդակութեան նշանաւոր կետերի հետ: «Ասիսերգանք» ին էլ մի էջ տեղ տալով, հետեւեալ թղթից սկսուումէ «Լաստիվերացի Արխատակէս վարդապետի պատմութիւնը» որը վերջանում 185-դ երեսում: զըլուի իւն: Արան հետեւումէ թարգմանչի «ծանօթութիւնները» ամփոփած 37 երեսներում: որի մասին մեր ասելիքը թողնում էնք «պատմութիւններից յետոյ: Դ երեսում էլ այրուենական կերպով դասաւորուած է պատմու-

թեան մէջ յիշուող յատուկ անունների ցանկը (ինչպէս և բնագրում): Յետոյ զլուխների ցանկը և վերջապէս տպազրական «վրիստակները»:

Արք պատմագիրների մէջ շատ անբախտ է եղել Լաստիվերացի Արխատակէս վարդապետը: Տասն և մէկերորդ դարու մէջ Հայաստանում շատ նշանաւոր թուանշանների և արիւն հեղութիւնների ականատես է եղել և ամենը արձանագրել դրոշմել է իւր պատմութեան մէջ: Բարեյիշատակ վարդապետի ամրողջ պատմութիւնը լի է ողբերով ու հառաներով «Զի ոչ մի օր կամ միոյ ժամանակի հանդիպեցաք անդորրութեան կամ զիւրութեան—զրումէ իւր զբքի յիշատակարանում Հ. պատմագիրը— այլ ամենայն աւուրց մերոց լի եղել խռովութեամբ նեղութեամբ և օր ըստ օրէ յաւելցը ևս ի չարչարանն և ի տառապաննն ...»:

Ժամանատկակից դառն պատահարները, հայրենիքի օրհասական զրութիւնը, ախրութեամբ ալեկոծել յուղել ու շատ վշտերով լցրել են արժանայիշատակ պատմահօր սիրալ: «Յոր աւուրս մեր զարթան պատերազմունք ի չորից կողմանց, յարեւելից սուր, յարեւմաից սպանումն, և հիւսիսոյ հուր և ի հարաւոյ մահքարձան ուրախութիւնք յերկրէ, լոեցին ձայն քնարաց, լսեցին բռնրիւնք թմբկաց, բարձրացան աղաղակք լալեաց ...» նախերգումէ Լաստիվերացին: Եւ իրաւ պատմահօր սոյն զըլուածքը մի ողբերգութիւն է մի եղերերդութիւն (Elegien), որ փշաքաղումէ կարգացողի սիրալ: Լաստիվերացու զըլին նիւթ են եղել այն սոսկալի աղէտները, որոնք հասցրին Հայոց երկրին Հռոմայեցւոց բռնակալ Վասիլ, Բյոմանոս կայսերները, պարսիկ սուլթանները, Տէր-կիրակոսի պէս մատնիչ, ցած հոգի քահանաները, թոնզրակեցւոց մողորեցուցիչ աղանդիի յայտնուիլը, Կունծիկ արեղանների պէս շնանուն» հոգեորականները և վերջապէս Անիի սրածութիւնը, Ալփասլանի մուաքը: Այսպէս ահա Լաստիվերացին իջել է տիսուր և յուսահատական ձայնով զրել է անմիմիթար և ցաւալի տողից: «Ովք քանի դառն է պատ-

մութիւնս և ողբոց արժանն—ողբումէ զարդապետը—այլ թերեւս ոք մեղադիր լինիցի մեջ թէ մինչեւ ցերը զվշտաց և զնեղութեանց արկանես առաջի մեր զրոյցս:

—Թարգմանութեան հոգին, ընդհանուր կազմութիւնը, բնաւորութիւնն յաջող է, լեզուն սահուն, բայց տեղ տեղ դարձուածքներն անդուրեկանն Ընդհանուր առմամբ մի մեծ պակասութիւն չի նկատուում եթէ ըշշաշուենք աչքի ընկնող էր—է—էրան—է—էռ գերանուները:

Տեղ տեղ բնազրի զրաբար բառերը որ կարելի էր հեշտութեամբ փոխել աշխարհիկ լեզուի, թողնուած է նոյնպէս, և որ աւելի անտանելի է մի տեղում փոխուած է միւսում ու Օրինակ «օդնականութիւն» (բնազրում) չէ փոխած «օդնութիւն»—«օդնականութեան հասաւ» և այլն էջ 9, 17, 87, 101, 107. —Եւ ի նմին տեղւոջ զայ հանդէտէ թագաւորն Ավիսազաց Բագարատու... թարգմանուած է նոյն տեղում զալիս հանում էն (?) Ավիսազների Բագարատ թագաւորն ու... (էջ 3.)—Եւ ինքն դաստիարակութեամբ... թարգմանուած է՝ «Ինքը հանգիստ սրտով զնում» (է) իւր հանապարհը... (էջ 3) Այլ բան է դառնալ, այլ է զնալ:

—Եւ ինքն թագաւորն երթեալ վճարէ զհոգս արեւմտական կողմանն... Արեւմտական բառը թարգմանիչը թողել է նոյնպէս, թէ և կարելի էր զեղցիկ կերպով փոխել—արեւմտական (էջ 4.):

—... յորոյ վերայ սուր եղեալ առանձն դժուկէն անցն որ սուզ... թարգմանուած է... թշնամիները աղա(նեց)ին, որ մեծ սուզ... ժուկէն անցն բառերը բոլորովին դուրս է ձբդուած: (էջ 12.)

—Ո՞վ Ասոււած քո յայնմամ ներողութեան, ով թագաւորին անողորմ հրամանառութեանն... թարգմանուած է համարեա թէ բառացի դորա համար և բան չի հասկացուում:

«Ո՞վ Ասոււած քո յայնմամ ներողութեանը(ամառութիւննը), ով թագաւորի անողորմ հրամանին» (էջ 14.):

—Ես կամենումէր զնալ Հալպ կոչուած քաղաքի վերայ թարգմանելով, Հալպի մօտ հարցական նշան (?) է դրել թարգմանիւը որից երեսում չէ կարողացել ստուգել այդ քաղաքի ինչ լինելը: Եատ հաւանական է թուռում մեզ, որ Քաղաքը այժմեան Հալէպն է (Է. Կրճատուած) որ կոչուումէ նոյնպէս Քաղիկբոն-բերիս, մեծ Անդիսքից դեպի արեւելք Եփրատ և Արոնտ գետերի մէջ հին Ասուրիքում: (էջ 30):

—«Քանզի յոյժ հաւանեալ էր Քաղկեդոնական սահմանազրութեանն՝ ատելի զոլով ամենայն ուղղափառ հաւատոց»: Միջանկեալ ասենք որ պատմազրի այս խօսքերը Անեւարիկեաններին (որոնք հրատարակել են Լաստիվերտցու պատմութեան բնազրիրու) դուր չէ եկել և որ Քաղկեդոնից դուրս դաւանութիւններին սպառած է ասում զրքի նոյն երեսում՝ հրատարակիչները հետեւեալ ծանօթութիւնն են զրել՝ «ի վրեա կարծիս է պատմազրիս զԱռուրբ ժողովոյն Քաղկեդոնի, զորմէ վկայեն և ամենայն ուղղափառ միտք, հմուտքն ճշմարիտ պատմութեան ժողովոցն Արքոց և սահմանազրութեանց նոցին... (էջ 23):

—«Ի սորա առաջին ամին ապսասամբեաց որդին մանեակ ... թարգմանուած է առանց առուրբահնչու բառի Արք. թարգմանիչը երել մի աւելըրդ բան հաշուելով դուրս է ձգել (էջ 45.):

—«Յորժամ մեծն կաստանդին հիւանդացաւ, հիւանդութիւն՝ որով մեռաւ իսկ, հրաման տայ որք մերձ կային եթէ ելեալ արնդրեցէք... Հ. Մինասը թարգմանել է այնպէս, որ կարծես կոստանդին մեռնելուց յետոյ հրամայեց իւր մօտ կանչել... Ահա թէ ինչպէս:

«Երբ որ մեծ կոստանդինը (կոստանդին մեծը) մահուան հիւանդութիւնով հիւանդացաւ

ու մեռաւ էլ, հրամայեց մօար գանուղներին թէ . . . (էջ 52)

— « Զի՞նչ ասացից և զշարսանցն ի սենեկի, և զինայիցն առ աղաստի զսիրահարուստ ըդձիցն զրորդումն և զանժոյժ բնութեանն հակամիտութիւն» . թարգմ:

« Ա՞նչ պատմեմ առազաստում զանուած հարսների և փեսաների լիասէր ցանկութեան բոլորումը և անժոյժ բնութեան հակամիտութիւնը . . . » (էջ 55)

— « . . . Սա աւանիկ ազգ եղե յականջս Տետոն զօրութեանց այդ ամենայն» — « և որ է խորդին է լույս ինայշընք է Ձեզ թարգմանելիս, զուրս է ձգուած այս վերջին կտորը (էջ 79):

— « . . . եւ զորս արտաքոյ՝ զոմանս սպանեալ, և զմեծամեծ խողեանն եղեալ ի զիրկան առ ի նախատինս մեզ, և այդն իսպատինոց դեպացն՝ այս վերջի կտորը բոլորովին զուրս է ձգուած աշխարհաբարում: (էջ 84.):

— « Այսոքին են չարշար սպատմութիւնք քո, ովք քաղաքդ երջանիկ «—թարգմանիչը աւելորդ է համարել Արտաշը բառը:

— « Զարդեան և զանձիթ յորժամ յիշեմ և որ ինչ ի նոսա զործեցաւ, հատկիմ արտասոք, փղձի սիրտ իմ, և յիմարին միոք իմ, և զդողի հարկանի ձեռքս և ոչ կարեմ զոծ տողիս յառաջ խաղացուցանել . . . թարգմանուած է՝

« Խորձեան և Հանձիթ գաւառները ու նըրանցում (՝) — (նրանց մէջ) կատարուածները, երբ որ յիշում եմ ձեռներս զողում (է), և չեմ կարողանում պատմութիւնս շարունակել: Հարու է արտապատճեան, ի ու անձնական անձնական մեր է երկիր մածան որովայնք մեր՝ թարգմանուած է՝

— « . . . անյագարար կտորեցին զորս և զտին, մինչ զի արիւնն զօրէն գարնանարեր ժամանակին, յորժամ ի ջերմութենէ օդոյն շոան ծորեալ ելան: ի ձեռնն առուս առուս վիժե-

լով զշող երկրին զինի իւր հեղեղատերով, այսպէս և այնքան լունէ արեան առուք ի զիւականացն անկելոցն ելեալ ի զառ ի կող անշիս ի յորդութեան զնացիցն զշող երկրին հեղեղատեկին . . . թարգմանուած է՝

« . . . անյագ կերպով կատրեցին զտածներին այնպէս որ կտորուածների զիակների արիւնը, զարնան ժամանակի օդի տաքութիւնից հալուած ու ծորուած ձիւնի (՝) առուների նման հոսելով, երկրի հողը իւր յետեկից փոսացնումէր, զարիվայր տեղերում . . . հարկաւոր էր բնազրի հոգուն համեմատ թարգմանիլ և լիակատար: (էջ 96.)

— « Զայս և Փրկիչն յառաջագոյն գուշակեաց՝ թարգմանուած է՝

« Այս Փրկիչն էլ շատ յառաջ գուշակեց ։ Այս ի և Փէնք բառերի յարարերութիւնը սխալ է:

— « Նաև կանայք պարկեշաք և ողջախորհք . . . Ուպէս զի անպատճառ թարգմանած մինի, հանույտ բառը որ այժմ ընդունուած է աշխարհաբարում: Փոխուած է հանույտնութիւնը: (էջ 115.)

— « . . . եւ խոնարհ եղեն մինչեւ ի հող անձինք մեր և երկիր մածան որովայնք մեր՝ թարգմանուած է՝

« Հողի հետ հաւասարուեցան մեր անձերը իսկ և երկու համար ուսույնեան մեր, զուրս է ձրգուած, (էջ 136.)

— « Եւ որպէս առ Մովսէսիւ տասն հարուածեայ զաւազանաւն տանջեալ զնդիպասուակը Աստուած թէ ։ Այս է զօրութիւնը (՝) — թարգմանելիս արժանապատիւ հայրը պատմազրի այս վկացութիւնը բերելիս չէ յիշել թէ որ զրբից է. թէկ միւս տեղերում զրուած են:

« Ինչպէս Մովսէսի ժամանակ տասն պատիւներով տանջելով (տանջելիս) Եղիպատացիներին առումէր Աստուած (՝) այս է իմ մեծ զօրութիւնը (՝) — թարգմանելիս արժանապատիւ հայրը պատմազրի այս վկացութիւնը բերելիս չէ յիշել թէ որ զրբից է. թէկ միւս տեղերում զրուած են:

— « Եւ քանզի է կինդանի ինչ զոր սեպեանս կոչեն, զորմէ ասեն՝ թէ զամենայն զոյն փոխի, զի յորտորդացն ասլրեսցի ։ աշխարհա-

րարում սեղեանս բառը թողնուած է անփոփիս որ կը նշանակէ մարդաձուկ, սիւպիաձուկ (սովոր) — (Էջ 164*)

— « Զի զգուան երկաթի և զնիցս պղնձի ի բաց խլեսցէ » թարգմանելիս, նէտ բառը չէ թարգմանուած:

Համառօտակի թուենք այն բառերը, որ արժ թարգմանիչը կամ չէ թարգմանել թողնելով զրաբարը, կամ սխալ է թարգմանել օրինակ՝

Հարկանող — թարգմանուած է — խայթող — որ կը նշանակէ — զարնող, ծեծող. (Էջ 50.)

Մանկունք → մանկունքները → մանուկները (Էջ 6)

Առատ	→ բարի	→ առատ, առատաձեռն. (Էջ 28)
------	--------	----------------------------

Ժամանել	→ արժանանալ	→ համեն (Էջ 43)
---------	-------------	-----------------

Մի ըստմիոջէ	→ միըստմիոջէ	մինը միւսի յետեից (Էջ 99)
-------------	--------------	---------------------------

Գոռ	→ խրոխտանալ	ահաելի, զրաւոր (Էջ 118)
-----	-------------	-------------------------

Հարմ	→ տարմ	երամ, խումբ (Էջ 123)
------	--------	----------------------

Տիսուր	→ չար	տիսուր (Էջ 124)
--------	-------	-----------------

Ցղփութիւն	→ յղութիւն	հարսութիւն, ճղխութիւն (Էջ 139)
-----------	------------	--------------------------------

Հ. թարգմանիչը յիշատակարանը թարգմանելիս, (բնդարի Էջ 117 տողն) « ... երախնաթաց շարժմամբ ճանապարհն ձեպէր ի կիսագունդն անստուեր, զերկիր ընդ ինքեամբ ուշնելով » տողելոն ամրողջովին զուրս է ձգել մեղանյայտ պատճառով ։ աստիքը ուստի նէնչց յէտոյ տեղաւրուած է (թարգմանչի) « ճանօթութիւնները », որ թէեւ համառօտ, բայց գեղեցիկ կերպով ընթերցողներին ծանօթացնումէ զիգչպի մէջ յիշուած զանազան յատուկ անունների հետո: (137 ճանօթութիւն) ինչպէս քաղաքների լեռների գետերի մարդկանց և այլն:

Ուրիշ բան է մի որ և է լեզուից մի վեպ, մի յօդուած թարգմանելու ուրիշ է մի պատմական զրուածքի նիւթն ամբողջապէս զրաբարից աշխարհարար թարգմանելու վերջին

դէպքում պէտք է աշխատել ոչ բան աւելացնել ոչ պականեցնել, այլ թողնել անփոփոխ բընագիրի հոգու համեմատ թարդմանել և լիակատար:

Ա երջացնումէնք մեր ակնարկը Հ. Մինաս Տէր - Պետրոսեանի թարգմանութեան վերտբերմամբ: Կարծումնիք անաչառ կերպով միքանի նկատողութիւններ անելը ոչ թէ վնասակար, այլ շատ օգտակար է ամեն մի նոր լոյս տեսած դիքի, որի պակասութիւնը իրանից առաջ զգալի է եղել:

ԳՕԸ.

ԱԶԳԱՅԻՆ

ՀԵՌԱԴԻՐԻՄՆԵՐ

Սոցին կայսերական Մեծութեան պսակադրութեան առթիւ, ամսոյս 20-ին կատարուեցաւ հանդիսաւոր մաղթանք Ս. Խօման Աեղանի առաջ ի ներկայութեան Վեհակառ Հայրապետի, համագումար միարանութեան և խուռարն բազմութեան ժողովրդի: Այս առթիւ շնորհաւորական հեռազիրների պատասխաններն են:

Բարձրագոյն պատասխան

Է. Զ. Մ. Ի. Ա. Շ. Ի. Կ.

ԿԱՅՈՒԹԱԼԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՑ.

Եղօթք եկեղեցւոյն Հայաստանեայց և համայն բարեպաշտ Եղգին Հայոց, որով Հայցեալ է.ք զօրչնութիւն Հատուծոյ ի վերայ նորոյ ամուսնական կենաց Վերօց և գործոյ թարգաւորութեանս, ուրախ աւ-